

4.3.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների, 2013թ. հունվար-սեպտեմբերին հանրապետության տարածքում տեղաբաշխված զբոսաշրջիկների կոլեկտիվ և անհատական տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 587 307 զբոսաշրջիկներ (ՀՀ ռեզիդենտներ)<sup>1</sup>, ինչը 2012թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ավելացել է 38.2%-ով:

Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

մարդ

	2012թ. հունվար- սեպտեմբեր	Տեսակարար կշիռը, %	2013թ. հունվար- սեպտեմբեր	Տեսակարար կշիռը, %	Աճի տեմպը, %
<b>Ընդամենը զբոսաշրջիկներ<sup>2</sup></b>	<b>425 026</b>	<b>100.0</b>	<b>587 307</b>	<b>100.0</b>	<b>138.2</b>
որոնցից ըստ նպատակի՝					
գործնական	117 515	27.6	132 239	22.5	112.5
հանգստի և ժամանցի	244 208	57.5	352 284	60.0	144.3
բուժման	37 977	8.9	54 563	9.3	143.7
այլ	25 326	6.0	48 222	8.2	190.4

<sup>1</sup> Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **ներքին զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրի երկրի սահմաններում (սովորական բնակության միջավայրից դուրս), այսինքն որևէ երկրի բնակիչների ճանապարհորդությունը իրենց իսկ երկրում կամ հիմնական բնակության երկրում, անկախ ճանապարհորդության նպատակից (բացի ուսման նպատակով) ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով և ճանապարհորդության գլխավոր նպատակը չի հանդիսանում գործունեությամբ զբաղվելը, որի համար վճարվում է այցելած վայրում:

<sup>2</sup> Տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին: